Հավելված
ՀՀ կառավարության 2017 թ.
սեպտեմբերի 28-ի նիստի N 41
արձանագրային որոշման

2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Ֆիզիկական կուլտուրան և սպորտը հայ ժողովրդի մշակույթի անբաժանելի մասն են: Սոցիալական գործոնների ընդհանուր համակարգում դրանք հասարակության կողմից օգտագործվում են մարդու հոգևոր և ֆիզիկական բազմակողմանի զարգացման, առողջության ամրապնդման, հիվանդությունների կանխարգելման, առողջ ապրելակերպի ձևավորման, բնակչության ակտիվ հանգստի կազմակերպման գործընթացում:

2. Սոցիալ-տնտեսական իրավիճակով պայմանավորված՝ բնակչության շրջանում նկատվում է ֆիզիկական զարգացման և պատրաստականության, կյանքի տևողության ցուցանիշների անկում: Դրան զուգահեռ ավելանում են հիվանդությունների, հաշմանդամության ցուցանիշները: Նշվածը վկայում է, որ առկա են համալիր հիմնախնդիրներ, որոնց շարքում նաև՝ լուծման կարիք ունեցող ֆիզիկական կուլտուրայի և սպորտի խնդիրները:

3. Արդյունավետ չի գործում ըստ բնակության վայրի իրականացվող ֆիզկուլտուրային-առողջարարական ավանդական համակարգը, նվազել է ոլորտի մասնագետների թիվը: Լուրջ խնդիրներ են առաջացել մարզական կառույցների շինարարության, շահագործման և վերանորոգման գործընթացում:

4. Ծրագրում նախանշված են հիմնական գերակայությունները, կոնկրետ միջոցառումներն ու դրանց կատարման ժամկետները, իրագործման ուղիներն ու ակնկալվող արդյունքները, ֆինանսավորման աղբյուրն ու չափը:

2. ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5. Ֆիզիկական կուլտուրան և սպորտը յուրատեսակ միջոց են առողջության պահպանման և ամրապնդման համար, որոնք խթանում են համընդհանուր մարդկային արժեքների համակարգի ձևավորման և անհատի բարոյա-կամային որակների զարգացումը: Նշվածը իրականացնելու համար անհրաժեշտ է համակցված միջոցառումների համակարգ, որը պայմաններ կստեղծի մարդկանց առօրյա կյանքում ֆիզիկական կուլտուրայի արմատավորման և բնակչության առողջության մակարդակի բարձրացման համար:

6. Ծրագիրը նախատեսված է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում պետական քաղաքականության իրականացման համար:

3. ԾՐԱԳՐԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Բնակչության ֆիզիկական զարգացումը և ֆիզիկական պատրաստականությունը, որոնք ներառում են դպրոցականների, սովորողների, զինծառայողների ֆիզիկական պատրաստականությունը, ըստ բնակության վայրի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացումը, հաշմանդամների ֆիզիկական և հոգևոր վերականգնումը:

8. Սպորտի զարգացումը, որը ներառում է մանկապատանեկան սպորտը և մարզական հերթափոխի պատրաստումը, ինչպես նաև ազգային ավանդական մարզաձևերի զարգացումը և տարածումը, այդ թվում նաև հաշմանդամային սպորտը:

9. Բարձրագույն նվաճումների սպորտը: Օլիմպիական գաղափարների տարածումը: Դոպինգի դեմ պայքարի հսկողության ուժեղացումը: Մարզական արդյունքների բարելավումը:

10. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի նյութատեխնիկական բազայի ցանցի զարգացումն ու ամրապնդումը, ինչպես նաև բուժսպասարկման կատարելագործումը:

4. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

11. Ծրագրի նպատակը սոցիալ-տնտեսական նոր պայմաններում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին», «Մանկապատանեկան սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների հիմնադրույթների համաձայն հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացումը և նրա արդյունավետ գործունեության համար պայմանների ստեղծումն է 2018 թվականի ընթացքում:

12. Ծրագրի խնդիրներն են՝

1) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման սոցիալական առաջնայնության ապահովման համար իրավական և տնտեսական մեխանիզմի մշակումն ու իրագործումը.

2) բնակչության ֆիզիկական դաստիարակության համակարգի արդյունավետ գործունեության բարձրացման և զարգացման համար պայմանների ստեղծումը.

3) բնակչության առողջացման, ֆիզիկական զարգացման և ֆիզիկական պատրաստականության մակարդակի բարձրացումը.

4) օլիմպիական և պարալիմպիկ խաղերին, աշխարհի և Եվրոպայի առաջնություններին և այլ խոշոր միջազգային մրցաշարերին մասնակցելու համար մարզիկների և մարզաձևերի ազգային հավաքական թիմերի արդյունավետ նախապատրաստման և մասնակցության ապահովումը.

5) կադրերի պատրաստման համակարգի կատարելագործումը և ֆիզիկական կուլտուրայի ու սպորտի նյութա-տեխնիկական բազայի զարգացումը.

6) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում միջազգային կապերի ընդլայնումը.

7) ոլորտի գործունեության և զարգացման կառավարման համակարգի կատարելագործումը:

5. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

13. Ակնկալվող արդյունքներն են՝

1) ֆիզիկական կուլտուրայի և սպորտի նկատմամբ բնակչության վերաբերմունքի ձևավորումը.

2) բնակչության առողջության ամրապնդումը, անհատի ներդաշնակ զարգացումը, աշխատունակության բարձրացումը և երկարակեցության ապահովումը.

3) բարձրակարգ մարզիկների պատրաստումը, միջազգային մրցասպարեզներում Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի և մարզիկների մասնակցության ապահովումը, ինչպես նաև օլիմպիական և պարալիմպիկ խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում հայ մարզիկների կողմից բարձր նվաճումների հասնելը.

4) հայրենիքի պաշտպանությանը պատրաստ երիտասարդության ֆիզիկական պատրաստականության ապահովումը:

14. Ծրագիրը նախատեսում է ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման միջոցառումների ու գործունեության հիմնական ուղիները:

6. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

15. Ֆինանսավորման հիմնական աղբյուրը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեն է:

7. ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

16. 2018 թվականին իրականացվող միջոցառումներն են՝

№	Ծրագրի և միջոցառման անվանումը	Նպատակը և ակնկալվող արդյունքը	Հիմնախնդիրները	Ժամկետը	Ֆինանսավորման չափը (հազար դրամ)	Ֆինանսավորման աղբյուրը	Կատարողը
1.	***«ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում հանրապետական մարզական փառատոնի անցկացում».*** ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում ֆիզիկական ակտիվության և առողջության օրերի անցկացում	Աշխատունակության բարձրացում, հնարավորությունների ընձեռում՝ մասնակցելու մարդու ֆիզիկական վիճակի և մարզական արդյունքների բարելավմանը	Անհատի ներդաշնակ զարգացում	3-րդ եռամսյակ	6,960.0	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
2.	***««Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացում».*** ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացում	Բնակչության ազատ ժամանցի և ակտիվ հանգստի կազմակերպում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով ընտանեկան կապերի ամրապնդում և առողջ կենսակերպի արմատավորում, անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացման, բնակչության առողջության ամրապնդման, առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում	Ըստ բնակության վայրի ֆիզկուլտուրային-առողջարարական և զանգվածային մարզական աշխատանքների բարելավում	2-րդ և 3-րդ եռամսյակ	77,745.8	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

3.	***««Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթի անցկացում».*** «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթի անցկացում	Հաշմանդամություն ունեցող անձանց համար հասարակական կյանքի մարզական ոլորտում հավասար իրավունքների և հնարավորությունների ապահովում, պետական և ոչ պետական կազմակերպությունների համագործակցություն՝ նոր որակ հաղորդելու նպատակով համապատասխան օրենսդրական դաշտի ապահովում, ինչպես նաև ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով հաշմանդամություն ունեցող անձանց լիարժեք կյանք վերադարձի ապահովում	Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի նկատմամբ հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերմունքի ձևավորում: Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով հաշմանդամություն ունեցող անձանց առողջության ամրապնդում, անհատի ներդաշնակ զարգացում, աշխատունակության բարձրացում, երկարակեցության, ակտիվ հանգստի կազմակերպման և վերականգնման ապահովում, առողջ ապրելակերպի արմատավորում:	3-րդ եռամսյակ	16,945.3	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
4.	***««Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն» մրցույթի անցկացում».*** «Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն» մրցույթի անցկացում	Նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում առողջ ապրելակերպի ամրապնդում, ֆիզիկական դաստիարակության միջոցով նրանց առողջության ամրապնդում, անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացում, առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում, երեխաների շրջանում տարբեր մարզաձևերով մարզվելու կողմնորոշման ձևավորում, նրանց	Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով նախադպրոցական տարիքի երեխաների առողջության ամրապնդում, անհատի ներդաշնակ զարգացում, երեխաների ակտիվ հանգստի կազմակերպում, առողջ ապրելակերպի արմատավորում, առողջության ամրապնդում	1-ին և 2-րդ եռամսյակներ	19,574.7	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

		ֆիզիկական որակների բարելավում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզչություն, նախադպրոցական հիմնարկներում ֆիզկուլտուրային, առողջարարական և զանգվածային մարզական աշխատանքների կազմակերպման խթանում					
5.	***««Երեխաների խնամքի և պաշտպանության լավագույն մարզական հաստատություն» մրցույթի անցկացում».*** «Երեխաների խնամքի և պաշտպանության լավագույն մարզական հաստատություն» մրցույթի անցկացում	Անհատի բազմակողմանի և ներդաշնակ զարգացում, մանկատների և գիշերօթիկ հաստատությունների երեխաների առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում, ֆիզկուլտուրա առարկայի դերի կարևորում, դպրոցական տարիքի երեխաների շրջանում տարբեր մարզաձևերով մարզվելու կողմնորոշման ձևավորում: Մանկատների և գիշերօթիկ հաստատությունների 3-6-րդ դասարանների աշակերտների ֆիզիկական ունակությունների բարելավում, առողջության ամրապնդում, տարբեր մարզաձևերում ընդգրկվող երեխաների թվի ավելացում	Մանկատների և գիշերօթիկ հաստատությունների երեխաների առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում	1-ին եռամսյակ	4,975.0	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

6.	***«Եվրախորհրդի սպորտի մասին համաձայնագրին անդամակցում».*** Եվրախորհրդի սպորտի մասին ընդլայնված մասնակի համաձայնագրին անդամակցելու անդամավճար	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության միջոցով իրականացվող ծրագրերով նախատեսված արդյունքների ապահովմանը նպաստում	Ինտեգրում եվրոպական պետությունների ընտանիքին	1-ին եռամսյակ	3,724.3	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
7.	***«Հաշմանդամային սպորտին առնչվող ծառայություններ».*** Պետական աջակցություն հաշմանդամային սպորտով զբաղվող մարզական կազմակերպություններին՝ «ՀՀ ազգային պարալիմպիկ կոմիտե» ՀԿ, «Հայաստանի կույրերի միավորում» հաշմանդամների հասարակական կազմակերպություն, «Խուլերի հայկական սպորտային կոմիտե» ՀԿ, «Հայկական հատուկ օլիմպիադաներ» ՀԿ	Հաշմանդամների տարբեր խմբերի շրջանում ֆիզկուլտուրային-առողջարարական աշխատանքների համադասում, առողջության ամրապնդում, նախորդ տարիների համեմատությամբ մարզական ցուցանիշների աճ, հաշմանդամների միջազգային կազմակերպությունների կողմից անցկացվող աշխարհի, Եվրոպայի առաջնություններում գրված տեղերի և վաստակած մեդալների աճ	Հաշմանդամների ինտեգրում հասարակությանը	2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ	9,000.0	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
8.	***2018 թվականին Երևանում կայանալիք սուսերամարտի Եվրոպայի մինչև 23 տարեկանների առաջնության անցկացում.*** 2018 թվականին Երևանում կայանալիք սուսերամարտի Եվրոպայի մինչև 23 տարեկանների առաջնության անցկացում	Հայաստանի մարզիկների Եվրոպայի մինչև 23 տարեկանների առաջնությանը մասնակցության ապահովում: Երիտասարդ խոստումնալից մարզիկների բացահայտում: Օլիմպիական գաղափարների տարածում: Մրցակցական փորձի ձեռքբերում: Եվրոպայի, աշխարհի առաջնություններին մասնակից	Հայաստանի մարզիկների Եվրոպայի մինչև 23 տարեկանների առաջնությանը մասնակցության ապահովում: Երիտասարդ խոստումնալից մարզիկների բացահայտում: Օլիմպիական	1-ին եռամսյակ	27,725.3	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

		Հայաստանի հավաքական թիմերի համալրում:	գաղափարների տարածում:				
9.	***«ՀՀ առաջնություններին և միջազգային միջոցառումներին մասնակցության ապահովման համար մարզիկների նախապատրաստում և առաջնությունների անցկացում».*** Մարզաձևերի զարգացման նպատակով պետական աջակցություն ՀՀ մարզական ֆեդերացիաներին	ՀՀ առաջնությունների անցկացման ապահովում: Համաշխարհային պատանեկան օլիմպիական խաղերին, աշխարհի և Եվրոպայի առաջնություններին ու վարկանիշային միջազգային մրցաշարերին լավագույն ձևով նախապատրաստվելու նպատակով ուսումնամարզական հավաքների կազմակերպում: Աշխարհի և Եվրոպայի առաջնություններում մրցանակային տեղեր գրավելով՝ ՀՀ մարզական հեղինակության բարձրացման ապահովում: ՀՀ առաջնությունների քանակի ավելացում, օլիմպիական խաղերին, աշխարհի և Եվրոպայի առաջնություններին, վարկանիշային միջազգային մրցաշարերին լավագույն ձևով մասնակցելու նպատակով ուսումնամարզական հավաքների քանակի ավելացում, միջազգային տարբեր պաշտոնական և ոչ պաշտոնական մրցաշարերին մասնակցության ավելացում:	Նշված ծրագրի իրականացումը կնպաստի օլիմպիական խաղերում, աշխարհի և Եվրոպայի առաջնություններում մրցանակային տեղեր գրավելուն և Հայաստանի մարզական միջազգային հեղինակության բարձրացմանը:	Տարվա ընթացքում	1,139,967.2	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
10.	***«Միջազգային մարզական միջոցառումների հաղթողներին և մրցանակակիրներին դրամական մրցանակների***	Օլիմպիական խաղերի, աշխարհի, Եվրոպայի առաջնությունների և համալիր միջազգային մրցաշարերի հաղթողների և մրցանակակիրների սոցիալական	Ծրագրի իրականացումը կնպաստի միջազգային մրցումներին մասնակցության արդյունքների	4-րդ եռամսյակ	5,000.0	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

	հանձնում». Օլիմպիական խաղերի, աշխարհի, Եվրոպայի առաջնությունների և համալիր միջազգային մրցաշարերի հաղթողների և մրցանակակիրների դրամական պարգևների վճարում	պայմանների բարելավում: Մարզիկների մարզական արդյունքների և սոցիալական պայմանների բարելավում:	բարելավմանը:				
11.	***«ՀՀ հավաքական թիմերին մարզահագուստով և մարզահանդերձանքով ապահովում»***. ՀՀ հավաքական թիմերին մարզահագուստով և մարզահանդերձանքով ապահովում	Նոր, ժամանակակից մարզահագուստով և մարզահանդերձանքով ապահովում, մարզման գործընթացի և արդյունավետության բարձրացում, ինչն էլ կնպաստի մրցումների ժամանակ լավագույն մարզական արդյունքներ ցուցաբերելուն:	Ծրագրի իրականացումը կնպաստի հանրապետության հավաքական թիմերին մարզահագուստով և մարզահանդերձանքով ապահովելուն:	1-ին եռամսյակ	81,840.0	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
12.	***«ՀՀ հավաքական թիմերի գլխավոր և ավագ մարզիչների վարձատրություն և աշխարհի չեմպիոններին պատվովճարի հատկացում».*** ՀՀ հավաքական թիմերի գլխավոր և ավագ մարզիչների վարձատրության և աշխարհի չեմպիոնների պատվովճարի հատկացման նպատակով պետական աջակցության ապահովում:	ՀՀ հավաքական թիմերի գլխավոր և ավագ մարզիչների և աշխարհի չեմպիոնների սոցիալական պայմանների բարելավում: Մարզիկների մարզական արդյունքների և սոցիալական պայմանների բարելավում:	Ծրագրի իրականացումը կնպաստի ՀՀ հավաքական թիմերի գլխավոր և ավագ մարզիչների և աշխարհի չեմպիոնների սոցիալական պայմանների բարելավմանը:	Տարվա ընթացքում	47,238.0	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
13.	***«Օլիմպիական խաղերում,***	Օլիմպիական խաղերում,	Ծրագրի իրականացումը	1-ին, 2-րդ,	157,000.0	ՀՀ	ՀՀ սպորտի

	աշխարհի և Եվրոպայի առաջնություններում բարձր արդյունքների հասած ՀՀ հավաքական թիմերի մարզիկներին և նրանց մարզիչներին ՀՀ Նախագահի անվանական թոշակի հատկացում». Օլիմպիական խաղերին, աշխարհի, Եվրոպայի առաջնություններին, միջազգային մրցումներին (այդ թվում՝ վարկանիշային) ՀՀ հավաքական թիմերի կազմում ընդգրկված մրցանակային տեղեր զբաղեցրած մարզիկներին, նրանց անձնական մարզիչներին և հավաքական թիմերի մարզիչներին յուրաքանչյուր ամիս ՀՀ Նախագահի անվանական թոշակի հատկացում	աշխարհի, Եվրոպայի առաջնություններում, միջազգային մրցումներում մրցանակային տեղերի նվաճում, անձնական արդյունքների բարելավում: Օլիմպիական խաղերի մասնակցության համար վարկանիշների ձեռքբերում, աշխարհի, Եվրոպայի և ՀՀ ռեկորդների բարելավում:	կնպաստի շահառուների սոցիալական պայմանների բարելավմանը:	3-րդ եռամսյակ		պետական բյուջե	և երիտասարդության հարցերի նախարարություն
14.	***«Սպորտային բժշկության և հակադոպինգային հսկողության ծառայություններ».*** ՀՀ հավաքական թիմերի անդամների գիտամեթոդական, բժշկական և հակադոպինգային ուսումնասիրությունների ուղղությամբ տարվող աշխատանքների բարելավում	Մարզիկների ուսումնամարզական գործընթացի և հակադոպինգային ուսումնասիրությունների ուղղությամբ տարվող աշխատանքների բարելավում	Ծրագրի իրականացումը կնպաստի մասնագիտական խոր գիտական հետազոտություններ անցկացնելուն՝ մարզիկների ֆունկցիոնալ հնարավորությունների հայտնաբերման համար	Տարվա ընթացքում	110,658.1	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

15.	***«Հակադոպինգային համաշխարհային գործակալությանը անդամակցում».*** Հակադոպինգային համաշխարհային գործակալությանը անդամակցելու անդամավճարի մուծում	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության միջոցով իրականացվող ծրագրերի բարձր արդյունքների ապահովմանը նպաստում	Դոպինգի դեմ պայքարի հսկողության ուժեղացում	1-ին եռամսյակ	4,228.6	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
16.	«***Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի անցկացում».*** Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի անցկացում	Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդների կենցաղում ֆիզկուլտուրայի և սպորտի ներդրում, Հայաստանի Հանրապետության ազգային բանակում ծառայելու համար ֆիզիկապես կոփված երիտասարդների դաստիարակում, նրանց ֆիզիկական ունակությունների մոնիտորինգի անցկացում: Մասնակից թիմերի, նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդների թվաքանակի և նրանց ֆիզիկական պատրաստականության աճ	Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդների ֆիզիկական պատրաստականության աճ	3-րդ և 4-րդ եռամսյակ	7,000.0	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
17.	***2018 թվականի Հարավային Կորեայի ձմեռային օլիմպիական խաղերին Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցության ապահովում.***	Հայաստանի մարզիկների մասնակցության ապահովում ձմեռային օլիմպիական խաղերին: Երիտասարդ խոստումնալից մարզիկների բացահայտում: Օլիմպիական գաղափարների տարածում:	2018 թվականին Փխենչանում անցկացվելիք ձմեռային օլիմպիական խաղերին մասնակցող Հայաստանի հավաքական թիմերի համալրում բարձրակարգ	1-ին եռամսյակ	24,340.0	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

	2018 թվականին Հարավային Կորեայում կայանալիք ձմեռային օլիմպիական խաղերին Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցության ապահովում	Մրցակցական փորձի ձեռքբերում:	խոստումնալից մարզիկներով				
18.	***2018 թվականի Բուենոս Այրեսի 3-րդ ամառային պատանեկան օլիմպիական խաղերին Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցության ապահովում.*** 2018 թվականին Բուենոս Այրեսում կայանալիք 3-րդ ամառային պատանեկան օլիմպիական խաղերին Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցության ապահովում	Հայաստանի մարզիկների մասնակցության ապահովումը առաջին պատանեկան օլիմպիական խաղերին: Երիտասարդ խոստումնալից մարզիկների բացահայտում: Օլիմպիական գաղափարների տարածում: Մրցակցական փորձի ձեռքբերում: Եվրոպայի, աշխարհի առաջնություններին մասնակից Հայաստանի հավաքական թիմերի համալրում:	2020 թ. Տոկիոյում (Ճապոնիա) կայանալիք ամառային օլիմպիական խաղերին նախապատրաստություն: Հայաստանի հավաքական թիմի համալրում բարձրակարգ խոստումնալից մարզիկներով:	1-ին եռամսյակ	54,081.0	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
19.	***2018 թվականի Հարավային Կորեայի ձմեռային պարալիմպիկ խաղերին Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցության ապահովում.*** 2018 թվականին Հարավային Կորեայում կայանալիք ձմեռային պարալիմպիկ խաղերի Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցության ապահովում	ՀՀ մարզական պատվիրակության մասնակցության ապահովում, սպորտի՝ որպես միջազգային ասպարեզում մեր երկրի ճանաչման հավելյալ միջոցի կարևորում, Հայաստանի հեղինակության բարձրացում, հաշմանդամություն ունեցող անձանց համար բարենպաստ պայմանների ստեղծում հասարակության մեջ նրանց ներառումն ապահովելու (ամբողջական դարձնելու) համար, հաշմանդամների շրջանում	Հաշմանդամություն ունեցող անձանց համար բարենպաստ պայմանների ստեղծում հասարակության մեջ նրանց ներառումն ապահովելու (ամբողջական դարձնելու) համար, հաշմանդամների շրջանում բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավում, հաշմանդամային սպորտի զարգացում	1-ին եռամսյակ	6,869.0	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

		բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավում, հաշմանդամային սպորտի զարգացում, մարզիկների մարզական վարպետության կատարելագործում:					
20.	***Հանրապետական ուսանողական մարզական խաղերի անցկացում.*** Հանրապետական ուսանողական մարզական խաղերի անցկացում	Ուսանողության շրջանում առողջ ապրելակերպի արմատավորում, ֆիզիկապես կոփված երիտասարդների դաստիարակում	Ուսումնական հաստատություններում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում, ուսանողների բազմակողմանի և ներդաշնակ զարգացումը, առողջ ապրելակերպի ձևավորում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով առողջ կենսակերպի արմատավորում, ազատ ժամանցի արդյունավետ կազմակերպում	3-րդ եռամսյակ	20,349.9	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
21.	***«ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և ԼՂՀ հանրակրթական դպրոցների 1-ինից 3-րդ և 4-7-րդ դասարանների աշակերտների միջև սպորտլանդիա» մարզական միջոցառման անցկացում*** «ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և ԼՂՀ հանրակրթական դպրոցների 1-ինից 3-րդ և 4-7-րդ	Անհատի բազմակողմանի և ներդաշնակ զարգացում, երեխաների առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում, ֆիզկուլտուրա առարկայի դերի կարևորում, դպրոցական տարիքի երեխաների շրջանում տարբեր մարզաձևերով մարզվելու կողմնորոշման ձևավորում:	Հանրակրթական դպրոցների աշակերտների ֆիզիկական ունակությունների բարելավում, առողջության ամրապնդում, տարբեր մարզաձևերում ընդգրկվող երեխաների թվի ավելացում	1-ին և 2-րդ եռամսյակ	28,773.4	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

	դասարանների աշակերտների միջև սպորտլանդիա» մարզական միջոցառման անցկացում						
22.	***ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և ԼՂՀ հանրակրթական դպրոցների 8-12-րդ դասարանների աշակերտների սպարտակիադայի անցկացում.*** ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և ԼՂՀ հանրակրթական դպրոցների 8-12-րդ դասարանների աշակերտների սպարտակիադայի անցկացում	1) Աշակերտների շրջանում ֆիզիկական պատրաստվածության բարելավում, նրանց աշխատունակության բարձրացում, առողջության ամրապնդում 2) Առողջ կենսակերպի արմատավորում և մարզական-մասսայական միջոցառումներին ուսանողության ներգրավվում	1) Հանրակրթական դպրոցների 8-12-րդ դասարանների աշակերտների շրջանում առողջ ապրելակերպի արմատավորում 2) Ֆիզիկապես կոփված երիտասարդների դաստիարակում	3-րդ եռամսյակ	31,000.7	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
23.	***ՀՀ գյուղական մարզական խաղերի անցկացում.*** ՀՀ գյուղական մարզական խաղերի անցկացում	ՀՀ մարզերի գյուղական բնակչության ակտիվ հանգստի կազմակերպում, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ֆիզկուլտուրայի և սպորտի ուղղությամբ կատարվող աշխատանքների խթանում, բնակչության շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզում, մարզերում բնակչության ֆիզիկական դաստիարակության, ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար նպաստավոր պայմանների ստեղծում	Սպորտի մասսայականացման միջոցառումների անցկացում հանրապետության տարբեր տարածաշրջաններում և համայնքներում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով առողջ կենսակերպի գաղափարների արմատավորում	3-րդ եռամսյակ	6,028.1	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
24.	***Տարեցների***	Տարեց բնակչության առողջության	Ֆիզիկական կուլտուրայով	3-րդ	9,335.0	ՀՀ	ՀՀ սպորտի

	հանրապետական խաղերի անցկացում. Տարեցների հանրապետական խաղերի անցկացում	ամրապնդում, առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում, տեղերում բնակչության ակտիվ հանգստի կազմակերպում, տարեց բնակչության շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզում, սոցիալական հավասարության խթանում, սպորտի մասսայականացում, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի միջոցով առողջ կենսակերպի գաղափարների արմատավորում և հասարակությանը նրանց լիարժեք ինտեգրում	և սպորտով զբաղվող տարեց մարդկանց թվաքանակի աճ	եռամսյակ		պետական բյուջե	և երիտասարդության հարցերի նախարարություն
25.	***Պետական մարմինների աշխատակիցների միջև հրաձգության հանրապետական մրցույթի անցկացում.*** Պետական մարմինների աշխատակիցների միջև հրաձգության հանրապետական մրցույթ	1) Աշխատակիցների շրջանում տարվող ֆիզկուլտուրային-առողջարարական ու մարզական աշխատանքների աշխուժացում, նրանց ֆիզիկական պատրաստականության բարելավում 2) Աշխատակիցների շրջանում սպորտի մասսայականացում	1) Աշխատակիցների շրջանում ֆիզկուլտուրային-առողջարարական ու մարզական աշխատանքների ակտիվացում 2) Հրաձգություն մարզաձևի նկատմամբ հետաքրքրության սերմանում, զենքի ճիշտ օգտագործման, դրա հետ ճիշտ վարվելու, արագ կողմնորոշվելու ունակությունների և հմտությունների զարգացում 3) Հրաձգություն մարզաձևի	1-ին եռամսյակ	700.0	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

			մասսայականացում աշխատակիցների շրջանում				
26.	***Աջակցություն հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի զարգացմանը.*** Աջակցություն հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի զարգացմանը	Մատաղ սերնդի ֆիզիկական դաստիարակության ամրապնդում, առողջ ապրելակերպի դաստիարակում, ազգային մարզաձևերի պահպանում	Հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի պահպանում, տարածում և զարգացում: ԼՂՀ–ում, Ջավախքում, ՀՀ մարզերում, համայնքներում, գյուղական շրջաններում կոխ ըմբշամարտի մարզման խմբերի ստեղծում:	Տարվա ընթացքում	13,022.2	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
27.	***2018 թվականին Երևանում կայանալիք պատանիների և երիտասարդների 1-ին ամառային սուրդլիմպիկ խաղերի անցկացման ապահովում.*** 2018 թվականին Երևանում կայանալիք պատանիների և երիտասարդների 1-ին ամառային սուրդլիմպիկ խաղերի անցկացման ապահովում	Հայաստանի Հանրապետությունում գործող հաշմանդամային մարզական կազմակերպությունների ինտեգրում հաշմանդամային սպորտով զբաղվող միջազգային կազմակերպություններին, հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրներով զբաղվող շահագրգիռ կազմակերպությունների միջև համագործակցություն, գործընթացների, հաշմանդամների տարբեր խմբերի՝ հասարակությանը ինտեգրվելու գործընթացի խթանում, հաշմանդամների շրջանում բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավում, հաշմանդամային սպորտում բարձր մարզական արդյունքների ձեռքբերում:	Հաշմանդամություն ունեցող մարզիկների մարզական վարպետության բարձրացում, միջազգային մրցումներին մասնակցության փորձի ձեռքբերում, մարզական արդյունքների, գրաված տեղերի, վաստակած մեդալների, միջոցառումներին մասնակցած մարզիկների թվաքանակի աճ	1-ն եռամսյակ	14,707.0	ՀՀ պետական բյուջե	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն